Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖS 2019.

Ստորագրվեց «Թաղիքագործության ազգային կենտրոնի վերանորոգման» ծրագիրը

2020 թ. մարտի 23-ին, Հայաստանում՝ Ճապոնիայի դեսպանությունում, տեղի ունեցավ «Թաղիքագործության ազգային կենտրոնի վերանորոգման» ծրագրի 71,559 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Քաղաքացիական զարգացման և համագործակցության» հիմնադրամի հասարակայնության հետ կապերի և գրասենյակային գործերի համակարգող, Նունե Ղազարյանի կողմից:

Ծրագրի նպատակն է վերանորոգել Լոռու մարզի Սպիտակ գյուղի մասնագիտական վերապատրաստման կենտրոնը, որտեղ դասընթացների մասնակիցները կարող են պատրաստել տարբեր տեսակի առևտրային առարկաներ՝ օգտագործելով թաղիքի ստացման զանազան եղանակներ: Վերանորոգումից հետո կենտրոնը ապահովված կլինի մասնագիտական վերապատրաստման դասընթացների համար անհրաժեշտ բոլոր հարմարություններով, որոնք կծառայեն տարածաշրջանում սոցիալապես խոցելի անձանց, մասնավորապես կանանց, երիտասարդներին, գործազուրկներին, փախստականներին և նրանց երեխաներին՝ այսպիսով նպաստելով նրանց եկամուտների ավելացմանը: Ակնկալվում է, որ դասընթացների մոտ 500 մասնակիցներ, ովքեր բնակվում են Սպիտակ քաղաքում ու հարակից համայնքերում, օգուտ կքաղեն այս ծրագրից:

Դեսպան Յամադան և «Քաղաքացիական զարգացման և համագործակցության» հիմնադրամի հասարակայնության հետ կապերի և գրասենյակային գործերի համակարգող, Նունե Ղազարյանը ստորագրեցին դրամաշնորհային պայմանագիրը